




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

261

ՀՏԵՅԼ

ԱՌԻՐԼԱԿ

Վ1985Ը

ՅԵՐԵՎԱՆ

L. ՇՏԵՅՆ

Ց Ա Ն Կ

Հառաջաբան	3
1. Ի՞նչ է մուրհակը	5
2. Մուրհակի ձևը	6
3. Դրոշմատուրք մուրհակների համար	8
4. Մուրհակը ստորագրելու կարգի և հավատարմագրերի մասին	10
5. Մուրհակի վճարման տեղը	11
6. Ինչպես գտնել տրված մուրհակները	12
7. Չվճարված մուրհակների բողոքարկման մասին	13
8. Բողոքարկման հետևանքները և նրա վերացման կարգը	13
9. Զգուշություն և հաշվառում	15
10. Հաշվետվություն և գրքեր	17
11. Մուրհակների վճարման մասին	19
12. Ապահովող մուրհակների մասին	21
13. Յերաշխավորում մուրհակների մասին	23
14. Վարկ ըստ մուրհակառվության	24

Մ Ո Ւ Ր Հ Ե Կ

(ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՊԵՐԱՑՈՐ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ՄՈՒՐՀԱԿԻ ՄԱՍԻՆ)

Թարգմանություն
Գ. ԿԱԶԱՐՅԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՊԻ

ՅԵՐԵՎԱՆ

1925



ՀԱՌԱՋԱԲԱՆ

Կոոպերատիվի գոյության հենց առաջին որերից կոոպերացիայի աշխատողները մուրհակի հետ գործ են ունենում: Հայտնի չէ, վոր միայն կանխիկ փողով առևտուր անելու հընարավորություն չունին վոչ միայն սկզբնական կոոպերատիվները, այլ և կենտրոնական խոշոր միությունը: Հենց այդ պատճառով կոոպերատիվին անհրաժեշտ ապրանքների մեծ մասը գնվում է ապառիկ՝ մուրհակային ապահովությամբ:

Շատ հասկանալի չէ, վոր յեթե չիմանանք թե ինչ է ներկայացնում իրենից մուրհակը, ինչպես է այն գրվում, ինչքանի և ինչպիսի գրոշմանիշներով պիտի վճարվի, ինչպիսի կարգով տրված մուրհակները հաշվառի յենթարկել, վոր նրանց վճարման ժամկետները անց չըկացնենք, ինչ հետևանքներ են լինում մուրհակները ժամանակին չըվճարելուց և այլն, մեր աշխատանքների ժամանակ շատ ավելորդ զժվարությունների և անախորժությունների պիտի հանդիպենք:

Հեղավորությունից առաջ, յերբ մեր յերկրում մասնավոր կապիտալն էր տիրում, բոլոր կարգի առևտրականները շատ լավ գիտեյին իրենց գործը: Նրանք գիտեյին, վոչ միայն մուրհակներ գրելու կարգը, այլ և ինչպես խուսափել այն բանից, վոր հենց այդ մուրհակները իրենց չըխեղգեն:

Անհրաժեշտ է, վոր մեր անտեսական ֆրոնտի յերիտասարդ աշխատավորները և մանավանդ կոոպերատորները յուրացնեն այդ այնքան էլ վոչ զժվար «իմաստությունը», վորպեսզի նրանք մասնավոր կապիտալի դեմ մղվող կռվում զինված լինեն առևտրական գործի հիմնական գիտելիքներով ու անհրաժեշտ կանոններով:

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Երատեպ. 56բ

Պատ. № 3520

Տիրամ 520



11-239449

I ԻՆՁ Ե ՄՈՒՐԱԿԸ

Մուրհակ և կոչվում պարտքի դեմ տրվող պարտավորագիրը, (обязательство), վոր գրվում և որենքով վորոշված մուրհակային թղթի վրա կամ հասարակ թղթի վրա, սակայն վորը վճարված և որինական չափով գրոշմանիշներով^{*)}։

Մուրհակի և հասարակ պարտավորագրի (ստացականի) տարբերությունը միայն այն և, վոր մուրհակին որենքով տրված են այնպիսի արտանություններ, այնպիսի ուշժ, վոր ներանով մուրհակ տվողից ավելի հեշտություն ու շուտ կարելի չի փող ստանալ քան հասարակ թղթի վրա գրած պարտավորագրով։

Հենց գրանով և բացատրվում այն, վոր վարկատու հիմնարկությունները (բանկերը) մուրհակները գեղջում են, այսինքն մինչև մուրհակի ժամկետ հասնելը մուրհակները մեջ գերված դուժարների դեմ փող են տալիս վորոշ տոկոսներ առնելով, իսկ հասարակ պարտավորագրերի դեմ վոշ մի կոպեկ չեն տալիս։

Մինչդեռ՝ յեթե գործը դատարանին և հասել, հասարակ քլքի վրա գրված մուրհակի ստորագրողը (պարտապանը) իրավունք ունի ապացուցելու, վոր այդ մուրհակով նրանից պիտի ստանան վոշ թե այն գումարը, ինչքան վոր գրված և թղթի, մեջ, այլ ավելի քիչ, մինչև անգամ նա կարող և բոլորովին հրաժարվել իր պարտքից, իսկ դատարանը պարտավոր և մուրհակատվի այդորինակ հայտարարությունները քննություն առնել, մուրհակը անվիճելի մի քուղք և և գործի քննության ժամանակ դատարանում վոշ մի հայտարարություն կամ պատճառարանություն չի ընդունվում, միայն թե մուրհակը որենքով նախատեսված ձևով լինի գրված, բացի գրանից ուրիշ վոշինչ հարկավոր չե և մուրհակատուն իր պարտքը վճարելուց վոշ մի կերպ չի կարող ազատվել։

^{*)} Մինչև այժմ հասարակ թղթի վրա մուրհակներ գրելը շարունակվում և. սակայն Ֆինժոդկամատը նախագրուշացնում և, վոր հենց վոր մուրհակային գրոշմաթղթերից բավականին քանակություն պատրաստ լինեն, հասարակ թղթի վրա մուրհակ գրելը բոլորովին կվերացվի։

II ՄՈՒՐՀԱԿԻ ՁԵՎԸ

Վարպետը մուրհակը մի անվիճելի փաստաթուղթ լինելու անհրաժեշտորեն նա պիտի գրված լինի պարզ ու վորոշ, առանց ավելորդ խոսքերի ու բացատրությունների, սակայն անողայման արենքով նախատեսմանված ձևով:

Ահա մուրհակի հիմնական ձևը:

Առաջին որինակ. (գրողմաթղթի վրա)

Մուրհակաթուղթ պարտագրերի համար	Մուրհակաթուղթ	 քաղաք « » 1925 թ.
	պարտագրերի	 ուղղությամբ մուրհակ. (վոսկով).
	համար	 (ամիսը ամսաթիվը և տարեթիվը գրել տառերով)
		Սույն մուրհակովս..... (գրել մուրհակատվի լրիվ անունը)
		պարտավորվում եմ (կամ ենք) վճարել..... (գրել վճարելու տեղը)
	 (այս ինչին - գրել պարտատիրոջ անունը) ու վոսկով, (գրել տառերով),	
	 վարչության նախագահ՝ անդամ՝ (ստորագր.)	

Ֆենթագրենք Ֆերեանի Բանկոտպը պիտի մուրհակ տա Հայկոտպին 1440 ո. 50 կ.՝ 1925 թվի սեպտեմբերի 1-ին վրձարելու պայմանով, Ֆերեանում: Մուրհակը գրվում է այսպես:

Ֆերեորդ որինակ. (մուրհակ-ղթի վրա)

Մուրհակաթուղթ, Ֆերեանի 4 հուլիսի 1925 թվ.	Մուրհակաթուղթ	1440 ո. 50 կոպեկի մուրհակ. (վոսկով)
	պարտագրերի	Հազար ինքն հաշույն բաճակի 1-ին սույն մուրհակով Ֆերեանի Բանկոտպը պարտավորվում է վճարել Ֆերեանում Հայաստանի կոպեկադրության միությունը-Հայկոտպին-կամ ում վոր նա կըհրամայի հազար յոթս հաշույն բաճակով ուր. 50 կոպեկ վոսկով:
	համար	
	գրողն է	15 կ.
	վոսկով	

Այդ յերկու որինակներից մենք տեսնում ենք, վոր 1) մուրհակ սալու սեղն ու ժամանակը գրվում են ձեռքով, մուրհակաթղթի վերելից՝ հայտնի թե յերբ և վորտեղ է մուրհակը արվում 2) մուրհակի գումարը վերելից գրվում է թվանշաններով իսկ մուրհակի վերջում տառերով 3) մուրհակի վճարման ժամկետը՝ տարին ամիսն ու ամսաթիվը, մուրհակի բովանդակության առաջին բառերն են և գրվում են սկզբից և 4) մուրհակի վճարման սեղն (քաղաքի անունը) գրվում է ձեռքով, այդտեղ ևլ պիտի վճարումը տեղի ունենա մուրհակում նշանակված ժամկետին:

Մուրհակի այս ձևերը պարզապես են: Ֆերեանի և Բանկոտպի և թողնված կամ ավելորդ բառ և գրված՝ մուրհակաթուղթի կարելի չե վիճարկել: Մուրհակի վրան ջնջումներ և ուղղումներ ել չի կարելի անել: Որենք, ճիշտ է, թույլատրում է ուղղումներ կատարել, բայց յերբ չի կարելի ուղղում կատարել մուրհակի գումարի, վճարման ժամկետի ու տեղի վերաբերմամբ: Բոլոր ուղղումները պիտի թվիկ մուրհակի բովանդակության վերջում մինչև մուրհակի ստորագրությունները:

Պիտի ի նկատի ունենալ, վոր ուղղումներ ունեցող մուրհակները, յեթե նույն իսկ այդ ուղղումները վավերացված են մուրհակի ստորագրություններից առաջ, որինական ձևով, բն-

գունվում են զժվարությամբ: Այդ խոյ պատճառով խորհուրդ կառայինք՝ մուրհակ գրելիս ձեռքի տակ մուրհակի որինակ ունենալ, մորովհետև յեթե մուրհակաթուղթը փչացնվի, ապա նրա արժեքն է կորցվում:

III ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔ ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մուրհակները վճարվում են զրոշմանիշներով՝ մուրհակի արժեքի $\frac{1}{10}$ տոկոսի չափով, կամ յուրաքանչյուր 100 ա. 25-ական կոպեկով: Այժմ արդեն գալտոսական ու նահանգական ֆինրաժիններում ծախում են հատուկ մուրհակաթղթեր (զրոշմային) սաղաթն միաժամանակ մուրհակ գրելը թույլատրվում է նաև հասարակ թղթի վրա: Այն զեպրերում, յերբ մուրհակը գրվում է հասարակ թղթի վրա, զրոշմատուրքը կարելի չէ վճարել յերկու կերպ:

1) Կամ համապատասխան գումարը պիտի մուրհակի նահանգ գահան կամ գալտոսական ֆինրաժինը՝ ստանալով համապատասխան անգործագիր (квитанция), վորի մեջ ցույց է տրվում, վոր այսինչ գումարը մուրհակում է այս ինչ կազմակերպության կողմից վորպես զրոշմատուրք՝ այս ինչ թվին, այս ինչ գումարի տրված մուրհակի համար: Քիճքաժեի անգործագիրը պեճ է գրված լիճի 60, 16 թվի, 16 թվի վոր մուրհակի 6 է գրված: Այդ ստացականը պիտի կարել կամ ամրացնել մուրհակին:

2) Կամ մուրհակին կպցնում են հաժապատասխան գումարի ($\frac{1}{10}$) զրոշմանիշը: Յուրաքանչյուր զրոշմանիշ պիտի անգցրված լինի մուրհակ տվող հիմնարկի կնիքով կամ մուրհակաթղթի ստորագրությամբ և բացի այդ մուրհակը տալու ամսի և ամսաթվի նշանակումով: զրոշմանիշները կնիքով կամ ստորագրությամբ այնպես պիտի հանգցնել, վոր կնիքը և ստորագրությունը մուրհակի սպիտակ մասովն ել անցնեն: (Տես 3 և 4 որինակները):

Յերրորդ որինակ (հասարակ թղթի վրա)

Նոր-Բայադետ 20 մարտի 1925 թ.

624 ա. մուրհակ (վոսկով)

Հազար իճեր հարյուր բաճ հիճգ թվի մայիս 30-իճ Նոր-Բայադետի սպասողական ընկերությունը պարտավորվում է վճարել Յերեվանի բաղաժում Հ. Ս. Խ. Հ. Գյուլգամանտեհական Բանկին կամ ուժ վոր նա կը հրամայի վեց հարյուր բաճ չորս ուսլի վոսկով:

կնիք	Վարչության Նախագահ՝	Դրոշմանիշ 1 ա.	Դրոշմանիշ 50 կ.	Դրոշմանիշ 6 կոպ.
	Վարչության անդամ՝	Ս տ ո Ր ա զ Ր ու թ յ ու ն ն ե Ր ը	20-III-25	20-III-25

Չորրորդ որինակ. (հասարակ թղթի վրա)

Գորիս 7 մայիսի 1925 թ.

200 ուր. մուրհակ (վոսկով)

Հազար իճեր հարյուր բաճ հիճգ թվի հուլիսի 8-իճ յեճ հիճգին Գորիսի սպասողական կոոպերատիվը պարտավորվում է վճարել Յերեվանի բաղաժում Համամիութենական Կոոպրանկի Յերեվանի գործակալությանը կամ ուժ վոր նա կհրամայի յերկու հարյուր ուսլի վոսկով:

Գորիսի սպաս. ընկերության
Վարչություն հավատարմագրի
համաձայն
5 ապրիլի 1925 թ.

Դրոշմանիշ 50 կ.
Գ. Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ն
7 V 25

Հինգերորդ որինակ (հասարակ թղթի վրա)

Լենինական 15 ապրիլի 1925 թ.

1200 ո. մուրհակ (վոսկով)

Հազար թ666 հարյուր քսան քիսկ քվի ոգոսասի մեկի6
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ բանվորական կոոպերատիվը պարտավորվում է
 վճարել Յերևանում Հայաստանի կոոպերատիվների Միությանը
 «Հայկոոպին» կամ ում վոր նա կհրամայի. մի հազար յեւկու
 հարյուր ու. բլի վոսկով:

Դրոշմանիշ	3.
Կնիք	ու. բ.
15-IV-925	

Վարչության նախագահ՝ (ստորագր.)

Վարչության անդամ՝ (ստորագր.)

Դրոշմանիշները պիտի անպատճառ կպցնել մուրհակի յերեսի
 բան, իբրեք չի թույլատրվում դրոշմանիշները փակցնել մուր-
 հակի հակառակ (թարս) յերեսին, կամ դրոշ անիշների մի մասը
 ծալել մուրհակի հակառակ յերեսին կպցնելով: Նույնպես չի
 թույլատրվում դրոշմանիշները մեկ մեկու վրա կպցնել:

Մենք ասացինք, վոր մուրհակին փակցվում է $\frac{1}{4}$ $\frac{0}{10}$ դրոշմա-
 տուրք մուրհակի մեջ նշանակված դումարից և յեթե դրոշմա-
 տուրքը գոնե մի կոպեկով պակաս վճարվի, մուրհակը կորցնու-
 է իր մուրհակային ուժը՝ դառնալով մի հասարակ պարտադիր:

IV՝ ՄՈՒՐՀԱԿ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՅԵՎ ՀԱ- ՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոլոր հասարակական կազմակերպությունների տված
 մուրհակները պիտի ստորագրված լինեն առնվազն յերկու ստո-
 րագրությամբ և հաստատված կնիքով: Յեթե մուրհակը ստորա-
 գրվում է միայն մի անձի կողմից, վերջինս պիտի անպայման
 ունենա նոտարի կողմից հաստատված հավատարմագիր, այն մա-
 սին, վոր նա մուրհակներ ստորագրելու իրավունք ունի: Հավա-
 տարմագիր ունեցողը այս դեպքում մուրհակը ստորագրում է
 այսպես. «այս ինչ (անունը) սպառողական ընկերության այս-

ինչ թվից ու այս ինչ Ա-ով տված հավատարմագրին համաձայն»

— և ապա ստորագրությունը:

Շատ հաճախ դավառի կոոպերատիվները գործողելով իրենց
 ներկայացուցիչներին կենտրոն՝ ապրանք գնելու համար՝ նրանց
 չեն տալիս համապատասխան հավատարմութեղթ՝ ապրանքներ
 գնելու կամ մուրհակներ ստորագրելու մասին կամ թե նրանց
 տալիս են մանդատներ, վոր վոչ վոքի կողմից հաստատված չեն:
 Դրանից շատ թյուրիմացություններ ու գովարություններ են
 առաջանում, վորովհետև կենտրոնում գտնվող հիմնարկները՝ ան-
 ծանոթ լինելով մանդատը ստորագրողների ստորագրություննե-
 րի հետ, հնարավորություն չունեն իսկական մանդատը տարբե-
 րելու կեղծ մանդատից: Վորպեսզի այդպիսի դեպքեր չլինեն, բո-
 լոր կենտրոն գնացող իրադրյուններին կամ պիտի տալ նոտարի
 կողմից հաստատված մշտական հավատարմութեղթ կամ թե
 յուրաքանչյուր մանդատի ստորագրությունները պիտի հաս-
 տատված լինեն գյուղխորհրդի, շրջգործկոմի կամ գավգործկոմի
 կողմից: Այդ մանդատների մեջ պիտի ասված լինի, վոր «այս
 ինչ ընկերոջը հանձնարարվում է ապրանքներ գնել և մուրհակ-
 ներ ստորագրել (այսքան ուրլու) սահմաններում»:

V՝ ՄՈՒՐՀԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՏԵՂԸ

Յեթե մուրհակը տրված է, յենթադրենք, Յերևանում կամ
 Լենինականում հանգցրվելու պայմանով և մուրհակի մեջ գրված
 է «. այս մուրհակով վճարումը պահավոր ե66 Կաթա-
 րել Յերևանում»՝ պարզ է, վոր այդ պարտավորությունը ճիշտ
 կերպով պիտի կատարել և մուրհակը պիտի հանգցրվի անպայ-
 ման Յերևանում և վոչ թե այլ տեղ: Մուրհակ տվողը իրավունք
 չունի պահանջելու, վոր նրան մուրհակը հանգցնելու համար
 այլ քաղաք ուղարկեն, իսկ մուրհակապահը (մուրհակատերը)
 իրավունք ունի պահանջելու, վոր մուրհակի հանգցումը անպատ-
 ճառ տեղի ունենա այն քաղաքում, վորը նախապես վորոշված է
 մուրհակի մեջ:

Յեթե վորե և պատճառով մուրհակի վճարման տեղը մուր-
 հակի մեջ ցույց չի տրված, այդ որինակ մուրհակը հանգցվում
 է այնտեղ, վորտեղ նա տրված է:

VI ԻՆՉՊԵՄ ԳՏՆԵԼ ՏՐՎԱԾ ՄՈՒՐՀԱԿՆԵՐԸ

Սկզբնական կոռուպցիոնիզմի աշխատողներին շատերը կարծում են, վոր յեթե մուրհակը տրված է վորեւ հիմնարկի, նա մինչև վճարման ժամկետը հասնելը այնտեղ էլ պահվում է: Ի հարկե, այդ այդպես է: Շատ հաճախ մուրհակ չտացող հիմնարկը տալիս է այդ մուրհակը մի յերկրորդ հիմնարկի, յերկրորդը—յերրորդին, մինչև վոր այդ մուրհակը հասնում է բանկին կամ մի այնպիսի հիմնարկի, վոր ուզում է այդ մուրհակը իր մոտ պահել մինչև նրա վճարման ժամանակը կը հասնի:

Այսպիսով չհանգցրված մուրհակը բազմաթիվ ձեռքերով կարող է անցնել մինչև նրա վճարման օրը: Մի հիմնարկ մուրհակը մյուսին հանձնելի մուրհակի հակառակ յերեսին դնում է իր բլանկը (այսինքն իր վերագիրը և իր լիազորների ստորագրությունը): Այդ բլանկովը մուրհակի դիմաց նրա արժեքը (գումարը) ստանալու իրավունքը սրվում է մյուս հիմնարկին յեվ միաժամանակ յերես մուրհակ սվող հիմնարկը ժամկետին չըվճարի, վերջինիս պարտավորությունը իր վրան է առնում բլանկ զնող հիմնարկությունը:

Այստեղից պարզ է, վոր մուրհակատուն միշտ չի կարող իր մուրհակը գտնել այն հիմնարկում, վորին նա մուրհակ է տվել:

Սովորաբար բանկերը և այլ հիմնարկները, վորոնք մուրհակներ ունեն իրենց մոտ ստացած այլ կազմակերպություններից, վերջիններիս նախապես ծանուցագիր են ուղարկում մուրհակի վճարման ժամկետի մասին: Այդ ծանուցագրի ուղարկելը պարտադիր է: Մուրհակ սվողը խնայելով իր ժամկետը յեվ այն փնտի յեվ գտնի հանգցնելու համար:

Բայց ինչպես մուրհակատուն ինքն պիտի փնտի իր մուրհակը վճարելու համար, նույնպես մուրհակատերը պարտավոր է ժամանակին մուրհակը առաջագրել՝ նրանով ստանալու համապատասխան գումարը: Յեթե այս չկատարվի և մուրհակի տերը չըկարողանա ապացուցել, վոր իր մոտ գտնված մուրհակը ժամանակին նա ներկայացրել է և պահանջել է վճարել, ապա մուրհակը ժամանակը անցնելուց հետո իր մուրհակային ուժը կը կորցնի և կը դառնա մի հասարակ պարտագիր: Վորպեսզի այս չպատահի, մուրհակատերը (այն անձը, վորի մոտ մուրհակը գտնվում է), ժամկետը կորցրած մուրհակը հենց հետևյալ օրը (յեթե

նա չի հանգցրված) սովորաբար նոտարի միջոցով առաջագրում է մուրհակատվին՝ վճարելու պահանջով:

Այսպիսով ժամանակին չըվճարված մուրհակները վերջ ի վերջ ընկնում են նոտարի մոտ, վորտեղ յեվ այն պիտի փրկեսի նրա վճարման ժամկետի հետևյալ օրվանից:

Յեթե մուրհակը չի գտնվում վոչ բանկերում վոչ նոտարի մոտ, ապա անդուրեկան զրույթյունից խուսափելու համար՝ խորհուրդ ենք տալիս մուրհակով վճարելի գումարը մտցնել տեղական ֆինրադինի ի կարգադրություն դատարանի՝ ստանալով ֆինրադինից համապատասխան անդորրագիր, վորի մեջ պիտի ցույց տրված լինի, վոր այդ գումարը մտցրված է այսինչ (անունը) կազմակերպության կողմից այսինչ ժամկետով մուրհակի զրմաց:

VII ԶՎՃԱՐՎԱԾ ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Նոտարը, ընդունելով մուրհակատիրոջից մուրհակը՝ մուրհակատվին ծանուցագիր է ուղարկում, վորի մեջ նախազգուշացնում է, վոր յեթե 24 ժամվա ընթացքում մուրհակը չըհանգցրվի (մուրհակի գումարը չմտցրվի) ապա մուրհակը բողոքի յե տրվելու:

Իր այդ գործողությամբ նոտարը վկայում է, վոր խաղաղաբար մուրհակը վճարելու համար ժամանակին ներկայացրված է և վոր մուրհակը չնայած դրան չի հանգցրված: Այդպիսով մուրհակը (բողոքի արձանագրության հետ միասին) չի կորցնում իր մուրհակային ուժը նույն իսկ ժամկետից հետո և կարող է առաջագրվել ինչպես հարկին և վճարվելու:

VIII ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՇԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մուրհակը բողոքի դնալու հետևանքները մուրհակ տվող կազմակերպությունը զգալու յե 5—6 օրից հետո: Բանն այն է, վոր բողոքարկված կազմակերպությունների ցուցակները նոտարը ներկայացնում է պետական բանկին: Պարզ է, վոր հենց վոր Պետրանկին հայտնի յե դառնում, թե այս ինչ կազմակերպության մուրհակը բողոքի յե տրվել, անմիջապես նրա բոլոր վարկերը

փակվում են, այսինքն այդ որվանից նրա մուրհակները այլ ևս չեն ընդունվում: Իսկ քանի Պետական բանկը ինչպես և ֆնացած բոլոր բանկերը վորեն կազմակերպության մուրհակները չեն զեղջում՝ նրա մուրհակների բողոքարկման պատճառով, ապա շատ հասկանալի չէ, վոր այդպիսի կազմակերպությանը վոչ վոք այլևս ապաստիկ ապրանք ել չի ծախի: Այսպիսով այն կազմակերպությունը, վորի մո ռեակը բողոքի չե քովել, վաստիւրյուցից ու վարկից օմեն քեղ զրկվում է յեվ հենց գրեթե ել գանգաղ կերպով մեռնելու յե գասապարսվում:

Բայց բողոքի տրվելու ուրիշ դեպքեր ել են լինում. հաճախ և պատահում, վոր մուրհակը բողոքի յե տրվում վոչ թե այն պատճառով, վոր մուրհակ տվող կազմակերպությունը չի ուղեցել կամ չի կարողացել մուրհակը հանգցնել, այլ մի վոր և է թյուրլուծացումը, մի տեխնիքական պատահականությունից կամ վերջապես, հենց վորեն աշխատակցի անփութ լինելուց: Արխիակ դեպքեր են լինում, յերբ մուրհակատուն մուրհակի ժամկետին փողը փոխադրել և է ինչ-ինչ պատճառներով փոխադրված գումարը տեղ չի հասել կամ հասել բայց այն հիմարելը, վոր պիտի վճարեր մուրհակի գումարը, ժամանակին չի արել այդ կամ արել է վոչ թե այդ այլ մի ուրիշ մուրհակի վերաբերմամբ: Լինում են նաև դեպքեր, յերբ մուրհակը բողոքի յե գնում անփութության հետևանքով: Մուրհակը տալիս՝ վոչ մի գրքում հիշելու համար ժամկետը չեն նշանակում, կամ գրքում են սխալ ժամկետով:

Այսպիսի դեպքեր՝ դժբախտաբար շատ են պատահում, մանավանդ գավառական կոոպերատիվներում: Պատահում է որինակ Յերեան և գալիս վորեն հեռավոր կոոպերատիվի ներկայացուցիչը՝ ապրանքներ գնելու համար: Ապրանքներ գնելուց հետո՝ իր վարչության անունից նա մուրհակներ և ստորագրում, բայց այս մասին իր կոոպերատիվի հաշվապահությանը մոռանում է ասել, կամ իր բոլոր ստորագրած մուրհակների մասին ասում է, բայց մեկի մասին մոռանում է կամ բոլորի մասին ասում է, միայն ժամկետների մեջ մի մուրհակի վերաբերմամբ սխալ է անում: Պարզ է, վոր այդպիսի անուշադիր և անփութ վերաբերմունքը շատ տխուր հետևանքներ է տալիս:

Յեթե բողոքարկված կազմակերպությունը կարողանա փաստերով ապացուցանել, վոր մուրհակը բողոքի յե գնացել վոչ թե նրա վճարունակության բացակայության պատճառով (վոչ թե այն պատճառով, վոր նա մուրհակը հանգցնելու միջոց չի ունե-

ցել, այլ մի պատահական պատճառով), թյուրլուծացումը չեն տեսնում և այլն, ապա նա կարող է իր վստահությունը և վարկը նորից վերականգնել:

Դրա համար անմիջապես պիտի Պետական բանկին հայտարարություն տալ (Պետականի այն գրասենյակի կամ գործակալության հասցեով, վոր շրջանում մուրհակը բողոքի յե գնացել)՝ խնդրելով բողոքը վերացնել: Հայտարարությունը ապալման պիտի կցված լինի հանգցրված մուրհակը (բողոքի գնացած մուրհակը, վոր նոտարի մոտն է յեղել), փաստաթղթեր, վորոնք ապացուցում են մուրհակների բողոքի գնալու պատահական ընդունումը—վերջին հաշվեկշիռը և այլ տեղեկանքներ գործի զրույթյան մասին, և բացի այդ՝ տասը ուրիշ գրասենյակային ծախսերի համար:

Պետական բանկի գրասենյակը կամ գործակալությունը այդ հայտարարությունը քննում է և իր յեզրակացությունը ուղարկում է Յերեան կամ Մոսկվա պետքանի վարչությանը: Այստեղ խնդիրը վերջնական վորոշման է դրվում: Այս բոլորը յերբեմն կարող է տեղ յերկու—յերեք ամիս:

Այսպիսով մենք քեռնում ենք, վոր ճուշտիկ պատահական կերպով բողոքարկված կազմակերպության գործերը բավական յեկար ժամանակով կարող են լուրջ խանգարման յեռարկվել:

Վերադառնալի այս չը պատահի, հարկավոր է նախ գործը տանել զգուշությամբ ու խիստ հաշվեառով, յերկրորդ՝ հետևել, վոր հաշվապահական գրքերը կանոնավոր պահվեն և գործի ճիշտ պատկերը տան, յերրորդ—պետք է հոգ տանել ժամանակին հանգցնելու բոլոր պարտքերը և առաջին հերթին—մուրհակային պարտքերը:

IX ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Առաջին գլխում մենք ասացինք, վոր մուրհակն անվիճելի մի փաստաթուղթ է, վորը պիտի վճարել ժամանակին՝ կարող է թե չէ կարող ուզում է թե չէ ուզում, այդ միևնույն է: Այս խոսքը պատճառով՝ մուրհակ պիտի տալ միայն այն դեպքում, յեթե նրա ղիմաց ստանում է կարևոր վորեն տրեք, ապրանք, փող մի անհրաժեշտ իրավունք, վորից ոգուտ պիտի ստանա: Մեկին մուրհակ տալ, «լավություն» տրած լինելու

համար, նրան հավասարով — յի կարելի: Համեմայն դեպք այդ բանից պիտի խուստ տալ: Այդպիսի մուրհակները կոչվում են «բարեկամական»: Միայն այն կազմակերպություններն են «բարեկամական» մուրհակները ունենալու իրավունք, վորոնց գործերը խնայված են և վորոնք ուզում են այդ մուրհակները գեղջելու միջոցով մի կերպ կարգի բերեն խնայված գործերը: Հավատարմով այդպիսի կազմակերպությունը քո մուրհակը՝ դու նախապես պիտի համոզված լինես, վոր մուրհակը դու պիտի հանգցնես, կամ, վոր ավելի վատ է, մուրհակը բողոքի չես գնալու:

Ապրանքի դիմաց մուրհակ տալիս դու պիտի լավ մտածես, վոր մուրհակը պիտի ժամանակին հետ գնես: Մուրհակ տալը շատ հեշտ բան է, մուրհակի վնասելն է դժվար: Դրա համար նախորոք պիտի մտածել՝ մուրհակը հեշտությամբ վնասելու մասին: Այսպես որինակ՝ յեթե քեզ առաջարկում են մի ամիս ժամանակով մուրհակի դիմաց ապառիկ ապրանք և դու համոզված ես, թե ապրանքը մի ամսում չես ծախելու, լավ կանես ապրանքի գնումից հրաժարվես կամ թե մուրհակի վնասման ժամկետը ավելի չերկարացնես: Յեթե մեծ գումարի ապրանք ես գնում, լավ կանես, վոր մուրհակը մի քանի մասերի բաժանես և վնասման ժամկետները դանաղան ժամանակ նշանակես: Մեծ գումարի մուրհակ ստորագրելուց պիտի խուստ տալ: Ձանաղան ժամանակներում մաս-մաս վնասելն ավելի հեշտ է, քան միանգամից մի խոշոր գումար վնասելը: Լավ կլինի յուրաքանչյուր մուրհակ տալուց սեղեկանալ, քե այդ նույն ժամկետներում վնասելիք մուրհակներ արդեն չես սվել մի այլ կազմակերպություն:

Բացի այդ՝ յեթե այն քաղաքում, վորտեղ Ձեր կուսակրատիվը գտնվում է, մի վոր և է բանի կա, լավ կանես, յեթե մուրհակի վնասման տեղը ցույց տաք ձեր քաղաքը: Վորովհետե յեթե վնասման տեղը այլ քաղաք է, դուք ստիպված պիտի լինեք մուրհակի գումարը մի քանի օր առաջ տեղափոխել և զրա համար հեռագրական ու փոստային ծախսեր անել: Յերբեմն ել՝ լինում է, վոր քեզ հայտնի չե, թե ինչ հասցեով փոխադրես պարտքդ, վորովհետե մուրհակի տեղը քեզ հայտնի չե: Այս հոդի վրա շատ թյուրիմացություններ են լինում: Լինում են դեպքեր, յերբ պարտքը ժամանակին ես փոխադրել, սակայն մուրհակը ելի բողոքի չես արվում:

Համեմայն դեպք՝ պիտի քաջապես վորեքն հեռավոր է քիչ

մուրհակներ տալ: Շատ ապրանք գնել ու մուրհակներ տալ, մանավանդ գործը նոր սկսելիս, շատ հեշտ է: Բայց շատ եղ չը պիտի զրանով գրավել: Միայն այն ապրանքները գեթ, վոր կուսակրատիվն պեճ են ու հեշտ ծախվող: Զգույս յեղի ու ամեն ինչ, հազվի առ, քե չե շատ ապրանք կառնես, պահեստներդ կլցնես, բայց մուրհակներից ժամկետները կհասցեն յեզ չես կարող վնասել: Դեպի քեզ ու ես կուսակրատիվը յեզամ հավասն ու վստահությունը կչանան: Այն ժամանակ արդեն ուր կլինի:

X ՀԱՇՎԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՐԲԵՐ

Ութերորդ գլխում մենք արդեն տեսել ենք, վոր շատ է պատահում, յերբ մուրհակը բողոքի չե արվում մուրհակատվի անփութություն կամ սխալի շնորհիվ: Այդ պատահում է այնտեղ, վորտեղ հաշվապահությունն ընդհանրապես կաղում է և մուրհակները խիստ հաշվետու չեն յենթարկվում: Վորպեսզի այդպիսի թյուրիմացություններ չըլինեն, հարկավոր է հաշվապահական գրքերի թվում ունենալ հետևյալ գրքերը:


(№ 1 ՁԵՎ)

ՏՐՎԱԾ ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ԳԻՐՔ ԿԱՍ ՏԵՏՐ

Յե՞րբ և մուրհակ արված	ՔՔ ըստ կարգի	Մուրհակի անորոշում	Հարկավոր ժամանակ	Վնասման տեղը	Մուրհակը համար չու համար յու արված	Նկատողություն

Այս գրքում (կամ տետրում) առանց բացառության գրվում են բոլոր մուրհակները ժամանակապահան կարգով և ըստ կարգի (համարներով):

Բայց վորպեսզի խմանաք, թե ինչ մուրհակների վնասման ժամկետները ինչ օրերի յեն ընկնում, պիտի ունենալ մի այլ



գիրք (կամ տետր), վորտեղ մուրճակները մտցրվում են ըստ վճարումների ժամկետների:

Ժամկետային գիրքը (կամ տետրը) պիտի ունենա 360 յերես (տարվա յուրաքանչյուր օրվա համար) կամ 180 յերես (յերկու օրին մի յերես): Փոքր կոտպերատիվները կարող են ունենալ տեղեկանքների տետր 12 յերեսից բաղկացած (յուրաքանչյուր ամսին մի յերես):

(№ 2 ՁԵՎ)

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԳԻՐԲ

ԺԱՄԿԵՏ «

»

1925 թ.

Մուրճակների №-ը	Գումարը	Վճարման տեղը	Ում և վճարված	Վորտեղ և գտնվում	Յերք և վճարված

Բայց նույն իսկ այս գրքերի կանոնավոր տարվելու ղեկը ու՛նի կարելի վստահանալ, վոր բոլոր մուրճակները հաշվի չեն առնված: Այդ բանը կախված է միջև անքան հաշվապահից, վորքան այն պատասխանատու աշխատողից, վորին հանձնարարվում է ապրանքների գնումն ու մուրճակներ տալը: Մենք շատ ղեկքեր գիտենք, յերք այդ լիազորները մուրճակներ են ստորագրել, իսկ իրենց վարչությանը ժամանակին չեն հայտնել: Յեւ միայն մուրճակի բողոքելուց հետո յեն վարչության անդամներն իմացել, թե նրանց անունից մուրճակ է տրված:

Այդ պատճառով՝ պիտի խիստ հրահանգ տալ, վոր այն պատասխանատու աշխատակիցը, վոր ապրանք գնելու և մուրճակներ տալու իրավուն ունի, կոտպերատիվի վարչությանն անպայման մանրամասն տեղեկություններ հայտնի իր ստորագրած մուրճակների մասին: Կամ ավելի լավ է՝ պահանջել նրանից տրված մուրճակների պատճենները և այն հիմնարկների ստորագրությունները, վորոնց մուրճակներ են տրված: Յեթե կոտպե-

րատիվի լիազորը այս բոլորը չի կատարում, պիտի այդ տեղեկությունները հարցնել համապատասխան հիմնարկությունից, վորտեղ ապրանք է գնված:

Ավելորդ չի լինի յեթե ժամկետային գիրքը յերբեմն համամասովի կոտպերատիվի հետ գործ ունեցող համապատասխան հիմնարկների գրքերին: Այդպիսով ամեն տեսակ սխալներին վերջ կտրվեն:

Միայն գործին այսպես ուշադիր լինելով կարելի չե համարացած լինել, թե բոլոր մուրճակները հաշվի չեն առնված ու ժամանակին գրանցված:

XI ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Յերք մուրճակը գտնվում է այն քաղաքում, ուր վճարվելու է, ապա նրա հետգնումը ղեկավար չե: Հարկավոր է միայն ժամանակին փողը պատրաստել: Բայց յերք մուրճակի վճարման տեղը ուրիշ քաղաք է, ապա մուրճակի հանգցնելու մասին պիտի նախորոք մտածել: Փողը փոխադրելը, նույն իսկ հեռագրով, շատ անգամ անհաջող է լինում, զանազան պատճառներով ճանապարհին ուշանում է: Հե՛նց այդ պատճառով փողը պիտի փոխադրել մուրհակի ժամկետից 3-4 օր առաջ: Փողը պիտի տեղափոխել այն հիմնարկի հասցեով, վորի մոտ մուրճակը գտնվում է, յեթե, ի հարկե, այդ մասին ժամանակին ծանուցադիր է ստացված:

Իսկ յեթե մուրճակի տեղը հայտնի չե՝ փողը պիտի փոխադրել այն հիմնարկին, վորին մուրճակը տրված է յեղի ժամանակին: Բայց թե այս ղեկքում է թե առաջին ղեկքում հիմնարկին պիտի հատուկ ծանուցում ուղարկել, վոր փոխադրված փողը այս ինչ մուրճակի հանգցման համար եւղարկված: Թե չե՝ փողը կարող է ժամանակին ստացվել, իսկ հիմնարկությունը՝ չիմանալով թե այդ փողը ինչի համար է ստացված՝ մուրճակը թյուրիմացություն կարող է բողոքի տալ:

Պիտի նկատել, վոր ավելի լավ է մուրճակը ուղղակի, առանց վորեւ կազմակերպություն միջնորդություն վճարել, յեթե այդ հնարավոր է, վորովհետեւ մինչև վոր սեփական աչքերով չհամոզվես, թե մուրճակը վճարված է, հանգիստ ու ապահով լինել չես կարող: Ժամկետային գրքի մեջ կանոնավոր անց կացնելով բոլոր վճարելիք մուրճակները, լավ կը լինի սո-

վորութեան դարձնել 5—10 որ առաջ բոլոր ժամկետային վճարումներն ի նկատի առնել, վորպեսզի ժամանակին անհրաժեշտ գումարները պատրաստվեն:

Յեթե, որինակի համար, $2\frac{1}{2}$ ամիս ժամանակով ապրանք է գնված և մուրհակ տրված, իսկ ապրանքը ծախվել է յերկու ամսվա ընթացքում, լավ կը լինի մուրհակը հետ գնել, նորից ապրանք գնել՝ նոր մուրհակ տալով, քան թե ծախված ապրանքից գոյացած գումարը շրջանառութեան մեջ գնել, վորովհետև նոր գնված ապրանքը հազիվ թե յերկու շաբաթվա ընթացքում ծախվի, վորպեսզի մուրհակը հանգցրվի ժամանակին, և մուրհակը բոլորքի չգնա՝ չնայած այն բանին, վոր խանութը լիք-հցուն կլինի ապրանքներով:

Զ. Կանոնադրյալ միջոցներ, վարկեր բարձրացնելը հնարավոր է միայն մի ճանապարհով.— դա բոլոր պարագայություններ, չեմ հասկապես մուրհակների ժամանակին հանգցնելու, պարսերը կանոնավոր վճարելու միջոցն է:

Յերբեք չպիտի մոռանալ, վոր մուրհակով գնած ապրանքը կամ այդ ապրանքի ծախելուց գոյացած գումարը ուրիշի միջոցներն են: Յերիտասարդ կոոպերատորները շատ հաճախ այս մոռանում են: Հենց վոր կոոպերատիվի դանձարկղում այդ ապրանքների վաճառքից գոյացած փող է կուտակվում, նրանց թվում է, վոր կոոպերատիվը հարստացել է: Յեվ փոխանակ այդ փողով տրված մուրհակները հանգցնելու՝ նրանք սկսում են անհաշիվ ծախսեր անել, անշարժ ու շարժական գույք գնել և այլն: Այդպես չի կարելի անել: Պիտի պարզ ու հասկանալի լինի բոլորի համար, վոր կանոնացումներ անել, գույք ունենալ չեմ այլև կարելի չե միայն այն ժամանակ, յերբ կոոպերատիվը սեփական ազատ միջոցներ ունի:

Իսկ այդ սեփական միջոցները կուտակվում են տարիների ընթացքում, անդամների փախավճարներից ու կոոպերատիվի առևտրից ստացած ոգուտներից: Հենց այդ պատճառով՝ պիտի գործը տանել զգուշութեամբ: Խնայողութեամբ և յուրաքանչյուր կողակեր տնտեսելով՝ ինչպես այդ հատուկ է գործի լավ տիրոջը:

XII ԱՊԱՀՈՎՈՂ ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մինչև այժմ մենք խոսեցինք հասարակ առևտրական մուրհակների մասին, վորոնք տրվում են վորոշ ժամանակով՝ ապագայի գնած ապրանքների դիմաց: Բայց շատ հաճախ է պատահում, վոր կոոպերատիվը իր կենտրոնական միություններից մի ամսվա մեջ մի քանի անգամ փոքր քանակով ապրանքներ է գնում: Պարզ է, վոր ամեն անգամ այդպիսի գնումների դիմաց մուրհակներ տալը նպատակահարմար չէ՝ վոչ ապրանք գնողի, վոչ էլ վաճառողի համար: Վորպեսզի կոոպերատիվի գործն էլ հեշտանա, կոոպերատիվ կենտրոնն էլ ապահով լինի, վերջինս համաձայնվում է ապրանք բաց թողնել «բաց հաշվով» — ապագայի, այսինքն վոչ այն պայմանով, վոր կոոպերատիվն ամեն անգամ մուրհակ տա իր գնած ապրանքների դիմաց, այլ, վոր նա ապրանքների վաճառքից գոյացած գումարը մաս-մաս մտցնի կենտրոնին, ինչքան վոր ապրանքը ծախվի — սակայն, որինակ՝ մի ամսից կամ մեկ ու կես ամսից վոչ ուշ ժամանակով: Բայց վորպեսզի բաց հաշվով ապրանք ծախող հիմնարկն իրեն ապահովի, նա կարող է պահանջել կոոպերատիվից անորոշ ժամանակով մուրհակ — (մուրհակ «ըստ առաջադրման»): Այդպիսի «առանց ժամկետի» մուրհակներ կարելի չե տալ նաև այն դեպքում, յերբ կոոպերատիվը վոչ թե գնում է ապրանքները, այլ ընդունում է այն՝ կոմիսիոն վաճառքի համար: Յենթադրենք՝ վորեկ խոշոր առևտրական կենտրոն ձեզ առաջարկում է այնպիսի ապրանք, վոր հեշտ ծախվող չէ: Պարզ է, վոր դուք չեք համաձայնվի ամուր պայմաններով գնել այդ ապրանքները և դրանց դեմ ժամկետային մուրհակներ տալ: Այն ժամանակ՝ այդ ապրանքի տեղը ստիպված է լինում մանրածախսի համար բաց թողնել իր ապրանքը կոմիսիոն հիմունքներով՝ այսինքն այն պայմանով, վոր ապրանքի վաճառքից գոյացած փողը մաս-մաս կամ միանգամից պիտի վերադարձվի իրեն՝ ապրանքների փառաբերեն ծախվելու համեմատ: Յեթե այդպիսի հիմունքներով կոոպերատիվին ձեռնառու չե իր վրա առնել մանրածախսի գործը, նա դրա համար վորոշ վարձատրություն է պահանջում (կոմիսիա), իսկ ապրանքատերը կարող է իր հերթին «ապահովող մուրհակ» պահանջել, վորպեսզի իրեն ապահովի այն դեպքում, յեթե կոոպերատիվը չուզենա այդ ապրանքից գոյացած գումարը ժամանակին վճարել:

Այդպիսով «ապահովող մուրհակները — ըստ առաջադրության» ժամկետով իրենցից ներկայացնում են պայմանական պարտավորագրեր, այսինքն այդ մուրհակով կարելի չի վճարում պահանջել միայն այն գեպքում, յերբ մուրհակատուն հրաժարվում է կատարել այն, ինչ վոր նա պայմանավորվել է կատարել մուրհակը ստորագրելիս: Յեթե, որինակ՝ կոոպերատիվը կոմիտեի միջոցով վերցրած ապրանքը ծախել է, բայց փողը չի մոցնում համաձայն իր պայմանի, կամ թե՛ «բաց հաշվով» գնած ապրանքի արժեքը չի վճարում վարկավորող հիմնարկին, ապա նրա «ապահովող մուրհակը» կարող է առաջադրել անմիջական վճարման: Մյուս կողմից պարզ է, վոր յեթե մուրհակատուն իր բոլոր պարտավորությունները ճշտությամբ կատարել է, նա իրավունք ունի իր «ապահովող մուրհակը» հետ պահանջելու:

«Ըստ առաջադրության» ժամկետի մուրհակը կարելի չի վճարման ներկայացնել 9 ամսվա ընթացքում:

Ահա այդպիսի մուրհակի որինակը.

Մուրհակաթուղթ Պարտքի համար	Յերևան 15 մայիսի 1925 թ. 1000 ո. մուրհակ. (վոսկով) Նորագավիթ գյուղի կոոպերատիվը սույն մուրհակի առաջագրմամբ պարտավորվում է վճարել Հաստատների կոոպերատիվների միությունը՝ Հայկոոպին մի հազար ութիսի վոսկով:
Գինն 2 ո. 50 կ. վոսկով	վարչ. նախագահ վարչ. անդամ } ստորագրություն ներ 

Այդ որինակ մուրհակները դրամանիշներով վճարվում են ստորական մուրհակների համար սահմանված կարգով և իրենց աշխատելիս տարբերվում հասարակ մուրհակներից:

XIII ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ՍՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մուրհակներ տալով ապառիկ ապրանք գնելը միշտ չի հաջողվում: Այդ գլխավորապես կախված է նրանից, թե ապրանք վաճառողը ապառիկ ապրանք ուղղին հավատում է, վստահում է թե չէ: Յեթե ապրանք վաճառողը այդ գնորդին չի հավատում, չի վստահում — պարզ է, վոր նրան ապառիկ (մուրհակի գիմաց) ապրանք չի տալիս: Այդ անվստահության պատճառները շատ-շատ են, հենց որինակ՝ այն, վոր ապրանք վաճառողը գնորդին կարող է չճանաչել: Բայց յեթե վորեք անձ կամ հիմնարկություն, վորին ապրանքի վաճառողը թե ճանաչում, թե վստահում է, այդ գնորդի համար ապառիկ գումարի (մուրհակի) յերաշխավորություն տա, ապա ապրանքը բաց կթողնվի: Դրա համար ապրանք գնելու ցանկություն ունեցողը պիտի գտնի մի այնպիսի անձ կամ հիմնարկություն, վոր գնորդին ճանաչում է և վորին միաժամանակ ապրանք վաճառողը հավատում ու վստահում է: Յեթե այդպիսի մեկը գտնվում է, ապա յերաշխավորության մակագրությունն արվում է մուրհակի հակառակ յերեսին հետևյալ ձևերով.

ա) «Այս մուրհակի վճարումը յերաշխավորում եմ»

բ) «Ներքին Աղբաշի սպառողական բնկերության վոխարեն յերաշխավորում եմ»:

Այդպիսի մակագրություն արվում է մուրհակի հակառակ յերեսին և ստորագրվում է յերաշխավորող հիմնարկության կամ անձի կողմից, ըստ վորում, մակագրությունը վճարվում է 1 ո. 65 կոպ. դրոշմանիշ:

Յերաշխավորություն կարող է գրվել փոշ միայն մուրհակի վրա վերը ցույց արված մակագրություններով, այլ և հատուկ պարտավորագիր տալով — վերջինիս համար նույնպես պիտի վճարված լինի 1 ո. 65 կ. դրոշմանիշով: Ահա այդպիսի պարտավորագրի մի որինակը:

«Յերեվան հազար իննը հարյուր բաճ յեկ իննգ թիվ, մայիսի 21-թ. 66. Յերեվանի Բանկոտայի վարչությունը ցերեկ պար-

հավաքագիրք հալիս և Համամիութենական կոոպերատիվ բանկի Թիֆլիզի բաժանմունքին առ այն, վոր 'տեբեթի' — Օդրաթի կոոպերատիվի՝ 500 ռ. (հիճգ հաբյուր ուրբի) մուրհակը՝ սույն թվի սեպտեմբերի 1-ին վճարելու ժամկետով՝ յերաշխավորում է քաղաքացիական որենտդրությամբ յերաշխավորներէ համար սահմանված բոլոր հեռանքներովը:

Լնիք


Յերևանի Բանկոտպի նախագահ (ստորագրություն)
Վարչության անդամ (ստորագրություն)

XIV՝ ՎԱՐԿ ԸՍՏ ՄՈՒՐԱՀԱՎԱՏՎՈՒԹՅԱՆ

Բայց լինում են դեպքեր, յերբ ապրանքի վաճառողը գնորդին շատ լավ և ձանաչում, սակայն մուրհակի գիմաց ապրանք չի կարող բաց թողնել, փորովհետեւ նրան կանխիկ փող է հարկավոր: Այս դրությունը կոոպերատիվի ապրանքները գնողի համար շատ դժվար է, քանի վոր նրա ձեռքին կանխիկ փող չկա: Այդ ծանր դրությունը շատ լավ և հայտնի վարկավորող հիմնարկություններին, մանավանդ Պետական բանկին և կոոպերատիվ բանկին: Ընդացած գնալով կոոպերատիվների այդ կարիքին՝ հիշյալ բանկերը մի այնպիսի կարգ են դրել, վոր կոոպերատիվները, յեթե մինչև ի դ կանխիկ փող չեն ունենում ապրանք գնելու համար, կրկին կարողանում են ապրանքը գնել մուրհակ տալով:

Այդպիսի դեպքում բանկը իր գրքերում հիշյալ կոոպերատիվին վորոշ գումարի վարկ է բաց անում: Այդ վարկը կոչվում է «վարկ ըստ մուրհակասվության»: Յեթե այդ կոոպերատիվը ապրանք գնելու լինի մուրհակի գիմաց, ապա ապրանք վաճառողը կարող է ստացած մուրհակը զեղջել բանկում ի հաշիվ վերև ցույց տված վարկի: Իհեճվաճճն այն է լինում, վոր քե կոոպերատիվն է ապառիկ ապրանք կառողանում ստացալ յեվ քե ապրանք վաճառողն է անմիջապես փող ստացում:

Յենթադրենք, վոր Ղամառլի «Լենուդի» կոոպերատիվը ցանկություն ունի իր անդամների խողովի և այլ մրգերի գնումները իր ձեռքն առնելու համար ապրանքային ավանսներ (կանխույթներ) տալ նրանց, սակայն կանխիկ միջոցներ չունի իր այդ մտադրությունը իրականացնելու համար: Ահա հենց այսպիսի դեպքում բանկը կարող է նրան ոգնության գալ:



Հարկավոր է, վոր կոոպերատիվի վարչությունը գիմի բանկին և խնդրի իրեն բանալ «վարկ ըստ մուրհակասվության»: Յեվ յեթե այդ գիմումը կանոնավոր կերպով ձեռքերից անցնում է, խնդրը շատ հեշտանում է: Դրա համար հարկավոր է ապրանքների գնելիս համապատասխան հիմնարկությանը ներկայացնել մուրհակները և միաժամանակ բանկի անունով հայտարարություն ներկայացնել այն մասին, թե այս ինչ մուրհակները (այս ինչ հիմնարկության տրված) պիտի զեղջել ի հաշիվ կոոպերատիվին բացած «ըստ մուրհակասվության վարկի»: Հիշյալ հայտարարությունը դրվում է այսպես՝

Համառուտական կոոպերատիվ բանկին

Յերևանում

Ղամառլի «Լենուդի» կոոպերատիվից

Հայտարարություն

Այսու խնդրում ենք մեր կողմից «Հայկոպին» տրված մուրհակները

1500 ռ. սույն մայիսի 2-ից. — ժամկետ 20 հուլիս 1925 թ.

1200 » » » 20 ոգոստոսի »

— 1000 » — » » 1 սեպտեմբերի »

Ընդունել ու զեղջել ի հաշիվ մեզ բացած — ըստ մուրհակասվության վարկի:

«Լենուդի» կոոպերատիվ վարչության նախագահ՝

Վարչության անդամ՝

Յերևան մայիսի 2-ին — 1925 թ.

Ինքն ըստ ինքյան հասկանալի չե, վոր ի չարը գործ գնել այսպիսի վարկը չի կարելի: Այդպիսի վարկին կոոպերատիվը գիմում է միայն ծայրահեղ դեպքերում, յերբ այլևս ուրիշ չեղ չկա, յերբ կոոպերատիվը սեփական կանխիկ միջոցներ չունի և միաժամանակ անհրաժեշտ է, վոր նա վորոշ ապրանքների պաշար ձեռք բերի իր անդամների կարիքները բավարարելու համար:



ԳՆԵՑԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Լույս եկեալ.)

1. Տիտոֆրով. — Ինչպէս անել, վոր կոտակերատիվի գործերը լալանան. — գունավոր շապիկով, 32 յերես, գինն ե 20 կոպեկ:
2. Կոտակերատիվի առաջին քայլերը. գունավոր շապիկով, յերես 40 — գինն ե 30 կոպեկ:
3. Պ. Ֆուլան — Գլուղացի, ուժեղացրու կոտակերացիան — 20 յերես, նկարազարդ շապիկով — գինն ե 5 կոպեկ:
4. Հ. Տ. Մ. — Ինչպէս պետք ե լինի կոտակերատիվի գործակատարը — 22 յերես, նկարազարդ շապիկով — գինն ե 8 կոպ:
5. Ինչպէս հիմնել կոտակերատիվ խանութ — 24 յերես, գինն ե 10 կոպ:
6. Պոթիսնով. — Ինչպէս պետք ե հաշիվ տա սպառողական ընկերութեան վարչութեանը — 26 յերես, գինն ե 15 կոպ:
7. Պ. Ֆուլան «Կորչեն չարչիները» 16 յերես, պատկերազարդ, գինն ե 8 կոպեկ:
8. Շեկն. — Մուրհակը — 26 յերես, 30 կ.
9. Կերմենցեվ. — Կազմակերպիր ինքդ թեզ — 56 յերես, գինն ե 35 կ.

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

(ԹՍՐԳՄՍՆՍԿՍՆ)

1. Չալանով. — Կոտակերացիայի համառոտ դասընթաց:
2. Մակեբովա. — Սպառկոտակերացիայի անցյալն ու ներկան:
3. Ոսերովսկայա. — Կոտակերացիան ինչու համար ե պետք գլուղացուն:
4. Կոժաճճի. — Ինչ պետք ե իմանա ամեն մի բանվոր:
5. Դեմիտով. — Կազմակերպեցեր խանութ ժողովներ:
6. Շալով. — Հաշվապահութեան համառոտ



19
23877
ԳԻՆՆԵ 30 ԿՈՊԵԿ

ՊԵՏՐԱՏՏՎՈՒՄ ԵՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Թարգմանական)

1. Ռիկով. — Կոռպերացիայի մասին (նաուր յեվ բանածեվի նախագիծը):
2. Լեւին. — Կոռպերացիայի մասին:
3. Կուլբբով. — Լենինն ու Կոռպերացիան:
(Ինքնուրույն)
4. Պ. Ֆոլյան. — Կոռպերատիվի ցավերը:
5. Մարգո. — Կինը յեվ Կոռպերացիան:
6. Գ. Ս.բով. — Լենինն ու Կոռպերացիան (չափածո):

~~ՍԵՐԿԱՐԱՅԻՆ~~

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՌՊԵՐԱՑԻԱ“

ՅԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ

Տարեկան 3 ուր. 50 կոպ.

3 ուր. 80 կոպեկ

Կես տարի 1 » 80 »

1 » 90 »

3 ամիս 1 »

1 » 10 »

Հասցեն՝ Յերեվան, Շահումյան փողոց № 3 — «Հայկոոպ»-ի

Խմբագրություն